Քասախն է, Տիկորը, Պտղավանքը, Կարսի Աղրակը, եւ այլն, ինչ որ մատնանշեցինք Ե. գլխի մէջ երես 25, միւս կողմից հին գերեզմանական կոթողների վերայ, որ հայ պատկերագրութեան ամենահին երեւոյթներն են եւ քրիստոնէական արեւելեան արուեստի հետ կապուած :*



Պատկ. 25ա.

Օձունի տաճարի վերայ եւս հարաւային ճակատի վերին լուսամուտի երկու կողմից տեսնում ենք նոյն սաւառնող, նման զգեստաւորութեամբ եւ հոլանի թեւերով հրեշտակները, ինչպէս Պտղավանքի հարաւային պատին, միայն այստեղ իրար հակառակ ուղղութեամբ թռչելով եւ քանդակներն համեմատաբար աւելի խոր. ձախ կողմինը բոլորովին փչացած է, իսկ աջինը կիսով չափ, բայց ընդհանուրը նկատելի: Լուսամուտի գլխին, առանձին քարի վերայ եղել է մի կանգնած Ֆիգուր, փչացած, արդեօ՞ք Ամենակալ: Պէտք է նկատել, որ այստեղ քանդակման արուեստն աւելի բարձր է, քան այդ տեսնում ենք Պտղավանքի վերայ, ինչպէս եւ Օձունի կոթողի չուչանածաղիկներն աւելի նուրբ, քան Պտղավանքի արեւմտեան լուսամուտի չուչանածաղիկն է:

Պատկերաքանդակներ կային նաեւ հիւսիսային, արեւելեան եւ արեւմտեան պատերի ճակատին. կիսով չափ պահուած է արեւելեան լուսամուտի գլխինը. բուն պատկը կազմուած է գնդակների շարքից, եզերուած դուրս ընկած բարակ գծերի (wulst) մէջ. պատկի հորիզոնական թեւերի վերայ երեւում են մի մի թեւաւոր հրեշտակի անդրիներ, որոնք բռնել են մի ձեռքով օձի պարանոցից, եթէ աչքի խաբկանք չէ, իսկ միւսով մարմնից. օձերի (?) մարմինը շարունակւում է պատկի թեւերի ուղղութեամբ՝ աջ եւ ձախ եւ վեր բարձրանալով, պատկի գլխին իրար փաթաթուելով հանգոյց կազմում, ապա նորից աջ եւ ձախ ուղղութեամբ շարունակուելուց յետոյ, վեր բարձրանում եւ վերջանում արմաւենիկի լայն տերեւով, կոթի մօտ օղակաւորուած :

Այս արմաւենիկի տերեւների եւ նրանց ցօղունների մէջ, լուսամուտի ճակատին Յիսուսի անդրին է, բայց աւետարանը ներքեւի կողմից ձախ ձեռքով բռնած Յովհաննու աւետարանի սկզբնաւորութեամբ, միջին երկաթագրով «ԻՍԿ ԶԲԱՆ Է ԷՐԲ ԱՆՆ ԵԻ — միւս երեսում — ԲԱՆ ԷՐ ԱՌ ԱԾ ԵԻ ԱԾ ԷՐ ԲԱՆ» :* Յիսուսի կուրծքի պարանոցի տակ, երեւում է շապկի մասը քառանկիւնի ձեւով, եզերուած երկգիծ զարդով, հագել է ներքնազգեստի վերայից, ձախ ուսից ձգելով, ծալքերով զարդարուն ծիրանի, որ թեթեւ կերպով երեւում է եւ աջ ուսից. ներքնազգեստի թեւերը, նոյնպէս ծալքաւոր, բազկի մօտ բոլորաձեւ զարդով բազպանդի նման: Աջ ձեռքը կտրուած է, ինչպէս եւ

*Գերեզմանական կոթողների բաժնում պատկերաքանդակների մասին պիտի խօսենք աւելի մանրամասն:

*Տարաբաղդաբար ձեռքի տակ չունինք մեր լուսանկարը. ուստի եւ մատնացոյց պիտի անենք Strzygowski-ի Die Baukunst. պատկ. 205: Օձերի պատկերն այստեղ, ինչպէս ընթերցողը տեսնում է կասկածելի եւ օտարոտի ենք համարում: Բայց օտարոտի մի ուրիշ երեւոյթի մասին պատմել է մեզ հանգուցեալ խաչիկ վարդապետը խաչաքանդակի հետ կապուած (տ. մեր Հաւուց Թառի Ամենափրկիչը, եր. 47. ծանօթ.):

Եթէ ճիշդ է մեր եզրակացութիւնը, թէ Օձունը շինուած է Ե. դարի վերջերին կամ Զ.-ի սկիզբը, ապա այստեղ ունինք հայ գրի ամենահին մնացորդը: